58. ՕՁՈՒ ԼԵԶՎԻ ՏԿՈՒ ԱԿ

Կէղնի, չէղնի կնիկըմ ու տղեմ՝ կէղնին. էդոնք շատ խեղճ կէղնին։ Մերն է, հ՚ըմն օր մեկ-մեկ ջուխտ բուճ կգործե կիտա տղեն, աղեն լէ կտանե շուկեն կծախե, կբերեն կառնին ուրանց հաց կուտին։

Օրըմ լէ տղեն կառնե ջուխտըմ բուճ, կտանե շուկեն կծախե, կառնե զփարեն օր հ՚իգա, կտեսնա օր էրկու իրեք ճիժ բռնած ին շունըմ ու կչարչրին։

Տղեն կասե ճժերուն.—Հ՚որի՞ զէդ շուն կչարչրիք, խեղճ է, անլեզու հայվան է։

Ճժեր կասին.—Քղիկ ի՞նչ, օր դու շատ կցավաս, հանե էրկու խըռոշ տուր, թողինք էրթա։

Տղեն կհանե զուրանց հացի փարեն կիտա, կթողին շուն կէրթա, ինք լէ կդառնա կիգա տուն, կիգա տուն, մեր կտեսնա, օր տղեն հաց չբերեր է, կասե.—Լաո՛, հ՚որի՞ հաց չբերիր։

Կասե.—Նանե՛, հացի փարեն հ՚ընկավ ճիբես կորավ։

Մեր քիչըմ անեծք. «Քու արնի մեջ խեղդվիս... զքու արևու. բար չուտիս,... զըրկ ու բըրկ էղնիս»։ Ու կմնա ուր հալի մեջ, հ՚էնօր կմնան անոթի։

Մեկէլ օր, մեկ լէ մեր ջուխտըմ բուճ կգործե, կիտա տղին,

կասէ.—Տա՛ր շուկէն ծախէ, րի՛ զփարէն, հաց առնիք, ախըր զմղիկ հ՚երեկ անոթի թողիր։

Տղեն կտանէ, կառնէ զփարէն կիգա, կտեսնա օր մեկ լէ էն ճժեր, ըստհաղ կատու մըն ին բռնի, կշարշրին։

Կասէ.—Տղա՛, լա՛ռ, մեղք չէ՞, էդ հայվան հ՚որի՞ կշարշրիք։

Ճժեր կասին.—Քզիկ ի՞նչ, աղեկ կէնինք, օր քու սիրտ կցավա վրեն, հանէ էրկու խըռոշ տուր, թողինք էրթա։

Տղեն մեկ լէ կհանէ ղուրանց հացի փարեն կիտա, կթողին զկատուն, կէրթա։ Տղեն լէ կթորկէ կիգա տուն։

Կիգա, մերն կասէ.—Լառ՛, հ՚ո՞ւր է մըր հացի փարեն, չէ՞ղնի հ՚էսօր լէ հաց չբերիր։

Կասէ.—Նանէ՛, վալլա՛, հ՚էսօր լէ ճամբու հետ գիկենք, քանիմ՚ աղա էկան թափան վրես, ծեծեցին, զփարեն հանին ծոցես։

Կպառկին կէշնին լուսուն, մեկ լէ մեր ջուխտըմ բուճ կիտա աղին կասէ.—Տա՛ր շուկեն ծախէ, ա՛ռ զփարեն էկու։

Տղեն կառնէ կիգա, կծախէ, կդառնա օր հ՚իգա, կտեսնա օր էդա հեղ լէ, օձմ՚ ին բռնած կշարշրին։

Կասէ.—Լառ՛, մեղք է, էդ հայվընից ի՞նչ կուզիք, թողեք էրթա։

Տղեկներ կասին.—Քու սիրտ օր կցավա վրեն, հանէ էրկու խըռոշ տուր, թողինք էրթա։

Տղեն կհանէ զէրկու խըռոշ կիտա, կթողին օձ, կէրթա։ Կթողին, օր կէրթա, հեռինա, զպոչ կբանցրցու վի, տղեն գինա զինք կկանչէ, կընկնի հ՚ետև, կէրթա։ Կէրթա օձ, գիկա ծրկում՚ դեմ օր մտնի ներս, կտեսնա տղեն, գլխով կէնե կիգա։

Կիգա, կասէ.—Ես կմտնիմ էդա ծակ, դու լէ էկո իմ հ՚ետևեն. ես օձերու թագավորի տղեն իմ, կասիմ իմ հոր՚ քանիմ՚ տղա բռնած են զիս կսպանեն, էդա տղեն ազատեց զիս։ Իմ հեր հանդէ, կասէ. «Հ՚ուզե, իտամ»։ Դու ուրիշ բան չըս հ՚ուզի, մինակ կասիս, քու լեզվի տկու ակ։ Բան չէնե, չվախենաս, կհանե սորա կիտա։

Օձ կմտնի ծակ, տղեն լէ հ՚ետևեն։ Օձ կէրթա կանի հոր հ՚առջ, կասէ.—Քանիմ՚ տղա բռնած են զիս, կշարշարեն, էդա տղեն էկավ ազատեց։

Օձերու թագավոր կդառնա վըր տղին, կասէ.—Հ՚ուզե՛, իտամ։

Տղեն կասէ.—Ես ուրիշ բան չըմ հ՚ուզի, զքու լեզվի տկու ակ ճուզիմ։

Օձերու թագավոր կասե.—Հա՛յ, քու սովրցնողի վիզ կոտրի, ուրիշ բան չկե՞ր սովրցներ, զէ՞դ պիտի սովրցներ,—կհանե կիտա։

Տղեն կառնե, կէլնի դուրս, կֆքրի վրը ական, կասե. «Ջանը՛մ, ես ի՞նչ խելք էր բանցուցի զէդա ակ հ՚ուզի, ես զէդա ակ ի՞նչ պիտի էնիմ՝ պիտի դարցում տանիմ իտամ հ՚ինք, հ՚իգամ»։

Կտանե օր իտա հ՚ինք, օձու ձագ կիգա հ՚առեջ, կասե.—Հ՚որին ես կանի կֆքրիս։

Տղեն կասե.—Իմա՞լ չֆքրիմ, էդա ի՞նչ էր տվիք ընծիկ։

Կառնե զտղեն, քաշվի մեկ դին, կասե.—Արի զքղիկ ցուցում զէդոր հունար։

Կէրթան թանա տեխրմ կկանին, օձ զակ կսրրե, ջուխտրմ արապ կկանին հ՚առեջ։

Կասին.—Սար վրը սարու։

Քար վրը քարու։

Օձ կասե.—Ն՛ը սար, վրը սարուն, նը՛ քար, վրը քարուն, քինե կուզիմ օր սուֆրեմ՚ փռիք հ՚ոդա, հաց ուտինք մենք։

Շուտրմ ջուխտակ արապ սուֆրեմ՚ կփռին, օր թագավոր լէ հրմալ սուֆրեմ՚ չկոնա փռե, կնստին տղեն ու օձն կուտին, կէլնին, կանին։

Էդ օձ ախչիկ կէդնի, տղեն կասե.—Հրմկա հասկցա՞ր, էդ ակի հունարք ի՞նչ է, կսրրիս, ջուխտրմ արապ կկանին քու հ՚առեջ, ինչ օր հ՚ուզիս, էնգահ կկատարին։

Օձ կթողե կէրթա, տղեն կառնե զակ կիգա տուն, մեր կասե.—Հ՚ո՞ւր է հաց չբերիր։

Շուտրմ զակ կսրբե, ջուխտակ արապ կկանին հ՚առեջ, սուֆրեմ՚ կսարքին, օր ուրանց ումրի մեջ իսկի չըն տեսի, կուտին, կէլնին կանին։

Հ՚էն օր կպառկին քնին, լուսուն կէլնին, տղեն կասե մոր.—Նանե՛, կէլնիս կէրթաս թագավորի ախչիկ կուզիս, կառնիս կիգաս ընծիկ։

Մերն կասե.—Լառ՛, էդ ի՞նչ խելք է, հիչ թագավորի ախչիկ քզիկ կիտա՞ն. շատ աղեկ տվին, հ՚ո՞ւր կրերիս պառկրցուս։

— Ջանրմ,—կասե տղեն.—քզիկ ի՞նչ, հ՚ուր կպառկցում, պառկցում, դու գնա րի, ես գինամ հ՚ուր կպառկցում։

Մեր կէլնի կէրթա թագավորի տուն, կասե.—Խընամաթոռք բերեք նստիմ։

Կբերին ծոտոտ աթոռքրմ դնին տակ, կնստի վրեն։

Թագավոր կհարցու, կասե.—Պառավ խե՞ր է, ի՞նչ կա։

Պառավն կասե.—Խեր է, ի՞նչ պիտի էգնի, էկեր իմ աստծու հրամանքով զքու ախչիկ կուզիմ իմ տղին։

Թագավոր կասե.—Շա՛տ աղեկ, բան չըմ ասի, մենակ քինե կուզիմ, օր իմ քոշկ ու սարի պես սարեմ՝ շինիք, սորա կիտամ, թե չէ՝ զքում լէ, զքու տղի գլուխ լէ կզարկիմ։

Մերն է, զէգ օր կլսե, կխաչկվի կէլնի կդառնա, կիգա տուն, կասե տղին.—Լաո՛, էդ լէ պիտըր, քզիկ ասի՝ թագավորի ախչկա լախա չունիս, անկաճ չէրիր։

— Նանե՛, ի՞նչ է էղի։

— Լաո՛, էլ ի՞նչ էղնի, թագավոր կասե. «Իմ քոշկ ու սարի վրեն ուսթ քոշկ ու սարեմ՝ օր չշինե, զքու տղի գլուխ կզարկիմ»։

— Նանե՛,—ասեց տղեն,—էդոր վրեն ես զքու մադեն էրի, աստված օղորմած է, քնի հ՝էլի, հար լուսուն տեսնաք աստված ի՞նչ կիտա։

Պառավն է, կէրթա ուր քոխ քնի, տղեն լէ կպառկի քնի, կես գիշեր կզարթի, զակ կսրբե, շուխտակ արապ կկանին հ՝առեջ.

— Սար վըր սարու,

Քար վըր քարու,

Ի՞նչ կուզիս։

Տղեն կասե.—Էդա գահ նը՛ սարու վախտ է, նը՛ քարու։ Զինե կուզիմ օր քոշկ ու սարեմ՝ շինիք հար լուս, վըր թագավորի քոշկ ու սարին ուսթ էղնի։

Արպներ թամանա կէղնին, կէրթան։

Տղեն լուսուն կէլնի կտեսնա օր ուր հ՝ուզած քոշկ շինած ին, կանկցուցած ին, վըր թագավորի քոշկ ու սարին լէ ուսթ։

Կէլնի լուսուն զմեր կճամբե կէրթա։ Մերն է, կէլնի լուսուն ուրախ զուրախ կքշե կէրթա թագավորի դիվան, կկանի.—Խնամաթո՛ռք, խնամաթո՛ռք։

Ըստհաղ հասարակ աթոռքըմ կբերին կդնին տակ։

Թագավոր կտեսնա օր ուր հ՝ուզած քոշկ ու սարեն շիներ է տղեն մեկ գիշերվան մեջ։ Կասե.—Ըստհաղ իմ տնեն չուր ի քու տուն ճամբու էրկու դին պետք է եմշի ծառ տնկե, օր իմ ախչիկ էրթա հ՝իգա, արև չառնե վրեն, գեշ հոտ չքսվի ուր քիթ։

Պառավ կէլնի մեկ լէ զմադեն կենե ու կդառնա կիգա, կասե տղին.—Աստված զքու տուն շինե, հ՝էսօր զէրեկ բեթար բան հ՝ուզեց, կասե. «Իմ դռնեն հար ձըր դուռ, քու տղեն պետք է ճամբու

էրկու դին ծառ տնկէ, օր արև չառնի իմ ախչկա վրէն, գեշ հոտ չքսվի ուր քիթ, էնգահ օր էրթա ու հ'իգա»։

Տղեն ասեց.—Ջանը՛մ, քնինք հ'էլնինք հար լուս, աստված օղորմած է։

Գացին պառկան քնան, կես գիշեր օր էղավ, ջուխտակ արապ կանան հ'առեջ, ասին.

— Սար վըր սարու,

Քար վըր քարու։

Տղեն ասեց.—Սարու, քարու ժամանակ չէ, ձինե կուզիմ թագավորի սարեսներուց հար մըր սարեք ճամրու էրկու դին լէ ծառ տնկիք, հըմալ սըխ էղնի օր արև չրանի ուր մեջ։

Արպներ գացին։

Լուսուն հ'էլան տեսան օր աստված ինք նշանց չիտա, օձ չբանի հ'ինք։ Լուսուն հ'էլավ ղմեր ղրկեց։

Մերն է, էլավ ուրախ-ղուրախ, սպիտակ հ'էրսով քշեց գնաց թագավորի դիվան։

— Խնամաթո՛ռք, խնամաթո՛ռք։

Բերին օսկի աթոռքըմ դրին տակ, նստավ։

Թագավոր կտեսնա օր ուր հ'ուզած բաղդեն լէ էղեր է, կասե. «Վալայի, պառավ զիմ ախչիկ տարավ, էլ ի՞նչ հ'ուզիմ, հըմալ բանըմ հ'ուզիմ, օր չկառնա բերե, բալքիմ զիմ ախչիկ հ'ետ դառցում, թը չէ՝ գնաց»։

Քիչըմ կֆքրի, կասե.—Պառա՛վ, մեկ բան մնաց, թե օր զէն լէ էրեց քու տղեն, գնա հարսնից թագարուկ տես, թե օր չէրեց, զքու տղի գլուխ լէ կզարկիմ, զքում լէ հետ։ էն է օր լուսուն կկանչիմ զինք բերիմ հոդա, ժողովուրդ լէ կկանչիմ բերիմ, օր կարցավ թաղքե բալտով զէղա արճիճ մանտրել, զաթի կիտամ զիմ ախչիկ առնիս էրթաս, թէ չէ՝ զթադարուկ ձի տեսեք, զգլուխ ձի կզարկիմ։

Պառավ կէնե զմադեն, կիգա տուն, տղին կասե։ Տղեն ինք լէ զմադեն կէնե ու կնստի ֆքրի. «Ջանը՛մ,—կասե,—հալա զէդոնք օր հ'ուզեցի արպրներ էրին, էդի՞ իմալ կէղնի»։

Կպառկին քնին, կես գիշեր կէղնի, զակ կսրբե, ջուխտակ արապ կկանին հ'առեջ, կասին.

— Սար վըր սարուն,

Քար վըր քարու։

Տղեն կասե.—Ի՞նչ սև սար ու քար է, թագավոր հրմլա բանըմ է հ՚ուզի հ՚իսնե, իմա՞լ կէղնի։

Արպըներ կասին.—Էդի խոլայ է, լուսուն կառնիս թաղքե կացին, կէրթաս կանիս հ՚ոնի, հանդե ժողովուրդ լէ կիգա, դու կզարկիս արճճին, դրամ-դրամ կէղնի, մենք կքաշինք փրցունք։

Լուսուն կէղնի, տղեն կէլնի թաղքե կացին կառնե ու կէրթա։ Ժողովուրդ կլսե օր էդ տղեն թաղքե կացինով արճիճ պիտի մանտըրտե, կթափի հ՚իգա։

Տղեն կացինով կզարկե ու արճիճ դրամ-դրամ կէլնի,—կմանարե կէլնա գետին։ Թագավոր զէդ լէ օր կտեսնա, կկանչե զպառավ, կասե.—Պառա՛վ, դը գնա հարսնից թադարուկ տես։

Պառավն է, կիգա հարսնից թադարուկ տեսնա, հարսնեք կբռնին ու կէրթան զթագավորի ախչիկ կառնին կիգան։ Քառսուն օր, քառսուն գիշեր գոլ ու զուռնեն կզարկին։ Հարսնեք կէնին կըփըրթնին կաղաղին։ Կընցնի ժում ու ժամանակըմ, էդ տղեն է, հ՚ըմն օր հ՚իրկուն զակ կբերե հանե դնե ջըզդընի մեջ ու կդնե թավան, լուսուն կէլնի կառնե կէրթա։ Հ՚իրկունմ՚ լէ կդնե, լուսուն կմոռանա, էլ չառնե ուր հետ էրթա, կմնա էնտեխ։

Էդ օր յահուդի չարշիմ՚ կօլըրդի դռներ, հրլուն, բըլազուկ կծախե, ախչիկ կտեսնա, ֆանջարից կկանչե, կհանե վի։ Կասե.—Ինչո՞վ կիտաս։

Կասե.—Հնով-մնով կիտամ։

Աչք կառնե հ՚առեք, կտեսնա օր թավնի մեջ հին ջըզդընիմ՚ կտոր կա, կասե.—Էնա ի՞նչ է, ըի, ի՞նչ օր կուզիս՝ իտամ։

Ախչիկ կէլնի կառնե կիգա, չգինա ինչ է, կիտա, քանիմ՚ թևնոց հրլուն կառնե։

Յահուդին կառնե զջըզդան, կէլնի դուրս, կբանա իշքե օր՝ ակըմ կա էդոր մեջ, կսրբե՝ ջուխտակ արապ կկանին հ՚առեջ։

Կասե.—Կուզիմ օր էդա քոշկ հրմլա ուր թախմով վերցուս դնիս յոթ ծովու օրթեն։ —Էնգահ քոշկ կվերցվի դրվի յոթ ծովու օրթեն։

Հ՚իրկուն տղեն կիգա, կտեսնա օր մեկ լէ հ՚ավալկու կիկոն, ն՚ը քոշկ կա, ն՚ը ախչիկ, էմ լէ ուր հ՚ավալկու քոխ ու ուր մեր։

Թագավոր լուսուն կէլնի կտեսնա օր ախչկա քոշկ չկա, կասե. «Էդ շանօրթին վալայի խաղըմ խաղցեր է իմ ախչկա գլուխ»։

Կկանչե կբերե, յոթ գազկան հորըմ փորել կիտա, զտղեն կթալե հ՚ինք։

Տղեն թըղ էրթա մնա մեջ հորուն, մենք դառնանք էն կատվի ու շան վրեն, օր տղեն ազատեր էր։

Օրըմ շուն կհոնդրդա, կիդա էդ հորու պռուկ, կիշքե օր աղեմ՝ կա հ՝ոդի թալուկ, կիշքե ուրանց ազատող տղեն է։

— Ավեր տուն,—կէրթա կատվին կասե.—չասի՞ս, էն տղեն օր ֆըլան վախըտ զմզիկ ազատեց, հանդե թալուկ ֆըլան տեխ, հորու մեջ։

Կառնին զիրար կիգան, էնդին վէն դին կճարին հըմն օր հաց, կբերին թալին տղին, կուտե։

Էդ հըմալ քառասուն օր զտղեն կպահին։ Քառասուն օրեն վերջ, էդ հայվրներն կմտածին.—Չէզնի,—կասին հ՝իրարու,—դինա՞ս թագավոր հ՝որի՞ն է զմըր մարդ թալի էդա հոր. արապըմ էկեր է գողցեր է զէդա տղի մատնըկի ակ, վերցեր է զքոշկ, տարի դրի յոթ ծովու մեջ, էնոքի է բերի թալի հ՝ոդա, էդոր ճարըմ գտնալու ենք։ Հ՝էլնեք էրթաք առնեք զմըր տիրոջ ակն ու հ՝իդանք։

Կբերին տաս-քսան ավուր հացն կթալին տղին հորու մեջ ու կթորկին կէրթան։ Կէրթան դաշտի մեջտեխ մըկանըմ հ՝ըռաստ կիգան, կատուն կհասնի, կբռնե զմուկն օր ուտե։ Փամփ վերցնելու պես, շուն կասե.—Կատու ախպե՛ր, զէդ մուկ պահի, մղիկ պետք կիգա,—կառնին զիրար իրեքն ու կիգան։

Շատ կիգան, քիչ կիգան, կհասնին ծովու պռուկ, շուն լողալ դիներ, կընկնի հ՝առեջ, կատուն կէլնի շան միջաց, մուկ վըր կատվին ու կընցնին կիգան։ Կիգան յահուգու քոշկ կէլնին դուրս։ Օր կիգան քոշկ կէլնին դուրս, մուկ կհարցու, կասե.—Ախպըրտանք, դուք հ՝ո՞րին էք էկի հ՝ոդա։

Կասին.—Յահուդու լեզվի տակ ակըմ կա, էնդոր հ՝ապով ինք էկի։

Մուկն կասե.—Էլ ձզիկ գործ չկա, էդի հասավ հ՝իս։

Կէլնի կիգա զպոչ կզարկե քացխի ջրդըկի մեջ, կտանե թաթխե աղեկըմ քըլսի մեջ ու հուշիկըմ կիգա կմտնի յահուգու տեխի մեջ, զպոչ կմտու յահուգու քիթ։

Օր կմտու յահուգու քիթ, յահուդին կփըռընգդա, օր կփըռընգտա, ակ կփրցնի լեզվի տրկեն, կընկնի գետին, շուտըմ մուկ կհասնի վրեն, կխածնե ու կփախնի։ Կբերե կիտա կատվին։ Օր կբերե կիտա կատվին, կատուն ու շուն զիրար կդավըշդին, էն կասե՝ թըղ մնա իմ մոտ, էն կասե՝ իմ մոտ։

Շուն կասե.—Օր իմ մոտ չիտաք, զձզիկ չըմ հ՝ընցու։

Կատուն կասե.—Կիտանք քու մոտ, բըլե դու շուքըմ օր տեսար ջրի մեջ, բերնեդ կթալիս, կընկնիս ջքի հ'ետև, էլ չընք կըռնա գտնա։

Շուն կասե.—Չէ՛։

Ճար ուրանց կկտրի, կբերին կիտան ջուն, կխածնե ու կէլնին հ'իրարու շալակ, կիգան։ Կիգան զջուր օր կընցնին, շուն ձկներ կտեսնա, օր մեջ ծովուն կլողան, հավ կէնե, ակ կընկնի բերնեն ու կհասնի վըր ձկներուն։

Կընցնին էն դին, կշիվարին կմնան, մուկն ու կատուն կէլնին կէրթան ծովու պոկի լենքն ու հ'երկենքն ու կիգան։

Կտեսնան օր էնդին ձկնորսներ ձուկ կրռնին։

Կէրթան էդ ձկներու խեչ, մեկ-մեկ կգողնան բերին զփոր ուրանց կպատռին ու կիշքին, շատ կբերին, մեկ լէ օր կբերին պատռին, կտեսնան օր ակ հանդէ էդ ձկան փոր։ Կառնին, կիգան, շուն լէ գտնան ու կիգան, կբերին կիտան ուրանց տեր։ Տղեն օր ղմատնեկ կառնե կլիզե, ջուխտակ արապ կկանին հ'առեջ։

Կասին.—Սար· վըր սարու։

Քար վըր քարու...

Տղեն կասե.—Նը սար վըր սարու, նը քար վըր քարու, դուք ի՞նչ բեբաղդ հէլաք օր վերցիք զիմ քոշկ դրիք յոթ ծովու օրթեն, էդա քառսուն օր լէ էդա տեխ կշարշրիք։

Արպրներ կասին.—Մզիկ ի՞նչ սուտ կա, էդա ակ վիր մոտ էղնի, մենք էնդոր ձեռքի տակն ինք։

Տղեն կասե.—Շատ չհ'երկնցուք, ձինե կուզիմ, օր զիս հ'ոկցած հանիք դուրս, զքոշկ լէ իմալ տարեր իք ծովու հ'օրթոլախ, մեկ լէ բերիք դնիք ուր տեխ։

Աչք խփուց բացեց տղեն, տեսավ օր քոշկ, մեկ լէ ուր տեխն է, ինք լէ հորուց դուրս, ղյահուդին բռնեց աղեկըմ կապեց, թալեց ներսով ներս։

Սորա բերեց աղեկ ձիմ՝ յոթն օր կապեց, գարի տվեց, խըլավցուց, բերեց զյահուդին կապեց էդոր պոչ։

Ասեց.—Ձի, քինե կուզիմ զյահուդեն սար զարկիս, ձոր զարկիս, զպոչդ յոթ ծովու օրթեն լվաս, դառնաս հ'իգաս տուն։

Ձին է, առավ զյահուդին, սար զարկեց, ձոր զարկեց, զպոչ յոթ ծովու օրթեն ցոխվեց, դառցավ էկավ տղի հ'առեջ կանավ։

Տղեն ասեց.—Հան հըմալ կուզիմ զքզիկ։

Թագավոր լուսուն հ'էլավ տեսավ օր քոչկն ու սարեն մեկ լէ էնդեխն է, ճամբեց ղտղեն ու զաղչիկն առավ գնաց, տղեն մեկ-մեկ պատմեց ղուր գլխու գալածն ու զյահուգու էրած, թորկեց էկավ առավ ղուր կնիկ, նստան, կէրան, խմեցին, քանի սաղ են։

Տղեն թագավորին լէ ցուցուց ղակ, շրփեց տեսավ օր ջուխ-գըմ արապ կանան հ'առեջ։

Տղեն սորա սուֆրեմ սարքեց, գավաթ էրեց ղուր աներ, կերան խմեցին ու ուրանց քեֆ էրին։

Աստծուց հ'իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։